ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

հունիսի 2021 թվականի №Ա
քաղ. Երևան

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԱՐՄԵՆԱԿ ԱՐՄԵՆԱԿՅԱՆԻ ՓՈՂՈՑՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՊՈՄՊԱԿԱՅԱՆԻ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) քաղաքացի Արամ Կոստանյանի (այսուհետ՝ Դիմող անձ) 2021 թվականի մայիսի 17-ի՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) հասցեագրված դիմումը՝ Երևան քաղաքի Նորք-Մարաշ վարչական շրջանի Արմենակ Արմենակյանի փողոցում կառուցված պոմպակայանի սպառման համակարգն (այսուհետ՝ Սպառման համակարգ) էլեկտրական ցանցին միացնելու նպատակով տեխնիկական պայմաններ տրամադրելու խնդրանքով,

բ) որ Սպառման համակարգն Ընկերության էլեկտրական ցանցին միացվում է Դիմող անձի դիմումի համաձայն՝ որպես առանձին սպառման համակարգ և լրացուցիչ ծախսեր չի առաջացնում,

գ) Երևան քաղաքի Նորք-Մարաշ վարչական շրջանի ղեկավարի 2021 թվականի մայիսի 31-ի №32/01-951 գրությունը (այսուհետ՝ Գրություն), որի համաձայն՝ վերջինս չի առարկում Սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացնելուն,

դ) Ընկերության 2021 թվականի հունիսի 17-ի №Ե-280-21 և Դիմող անձի 2021 թվականի հունիսի 17-ի գրությունները, որոնց համաձայն՝ վերջիններս չեն առարկում Սպառման համակարգն էլեկտրական ցանցին սույն որոշմամբ սահմանված ընթացակարգով միացնելուն,

և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358Ն որոշմամբ հաստատված էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների

(այսուհետ՝ Կանոններ) 13.8 կետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել, որ Սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացվում է Կանոնների 14.4 կետով սահմանված կարգով տեխնիկական պայմաններ տրամադրելու միջոցով՝ կանոնների 13.2 կետի 5-րդ ենթակետով պահանջվող փաստաթղթի փոխարեն հիմք ընդունելով Գրությունը:
2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ չի թույլատրվում Դիմող անձից պահանջել կատարել վճարումներ, տրամադրել հատուցում, ներկայացնել տեղեկատվություն և փաստաթղթեր կամ նրան ծանրաբեռնել պարտավորություններով, եթե դրանք սահմանված չեն Կանոններով, այլ նորմատիվ իրավական ակտերով, սույն որոշմամբ կամ էլեկտրամատակարարման պայմանագրով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Դիմող անձին և Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
հունիսի 2021թ.